**Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի   Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն**
**Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն   Բ Ա Ն Կ Ի   Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ԿՈԴ**
**050.0172 Ա. 29.09.2025**

**29 սեպտեմբերի 2025 թվականի թիվ 172 Ա**

# «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ՏԵՍԱԿՈՎ «ՈՉ ԿՅԱՆՔԻ ՎԵՐԱԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԴԱՍՈՎ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով* «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ժզ» կետով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 159-րդ հոդվածով, ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 30-ի թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» Կանոնակարգ 3/01-ի 6-րդ գլխով,

*հաշվի առնելով* այն, որ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը 27.08.2025թ. և 12.09.2025թ. դիմել է Հայաստանի Հանրապետության կենտոնական բանկ՝ «Վերաապահովագրություն» տեսակով «Ոչ կյանքի վերաապահովագրություն» դասով լիցենզիա ստանալու միջնորդությամբ,

*հիմք ընդունելով* Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության կոմիտեի եզրակացությունը (2025 թվականի

սեպտեմբերի 17-ի թիվ 41 արձանագրություն)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո ր ո շ ու մ է.**

1. «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել «Վերաապահովագրություն» տեսակով «Ոչ կյանքի վերաապահովագրություն» դասով լիցենզիա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերություն մուտքագրվելու կամ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

***Հայաստանի Հանրապետության***
***կենտրոնական բանկի նախագահի***
***տեղակալ***
***Երևան***

***Հովհաննես Խաչատրյան***